ՅՈՒՅԱԿ

Եկեղեցական սրբութեանց, զարդուց, անօթոց, զգեստուց և գրեանց սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի։

Կազմեալ 'ի 1888 ամի։

Համար.	Անուանք և տեսակք։	Ցիշատակարան նուիրողաց.
1	Աջ սրբոյն Ստեփաննոսի նախավկային՝ արծաթապատ զարդարեալ ակամբք, և ոսկեզօծ։	Ցիշատակ, Շամախեցի Սամուէլին յամին 1796
2	Աջ սրբոյն Եղիշէի առաքելոյն Աղուանից՝ արծաթապատ ոսկէզօծ՝ զարդարեալ ակամբք։	Ցիշատակ Մովսէս վարդապետին թուին ՌՃՁԳ (1734.)
3	Աղաւնի արծաթ ոսկեզօծ միանման երկու հատ։	Ցիշատակ բագուեցի Ադամեանց և Շարաբանդեանց։
4	Աւետարան գրչեայ՝ արծաթապատ երեսօք, ոսկէզօծ Խաչելութեան պատկերաւ, գրեալ ի թղթի և զարդարեալ ոսկենկար զարդուք և պատկերօք։	Ցիշատակ նոր Ջուղայեցի պարոն Գերաքին և որդւոցն թվ. ՌՂԳ. (1644), այսպիսի յիշատակարանաւ, „Արդ գրեցաւ՝ սուրբ Աւետարանս 'ի քաղաքս Շօշ 'ի գիւղս Ճուղայ հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոսի, և առաջնորդութեան մերոյ գիւղիս՝ Խաչարարձ և Քրիստոսի անմոլոր հետևողի տէր Խաչատուր եօթնարփեան չնորհօք լի վարդապետի, որ բազում երախտիք ունի 'ի վերայ մեղաւորիս, Աստուած հատուսցէ զվարձս իւր Է ապատիկ 'ի ծոցս իւր, և թաղաւորութեան պարսից փոքր Շահապասին, և իշխանութեան գիւղիս Խոճա Պողոսին։ 'Ի թվաբերութեան Հայոց Ռ. և Ղ. Գ. որ եւ գրել Ծաղիկն և իւր որդի Ռուստակեան զսուրբ Աւետարանս 'ի հալալ և